

ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՒՆԻՍԻ 19-ԻՆ ՏԻՐԱՆԱՅՈՒՄ ՍԾԱԶԲ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՆՐԴԻ ԿՈՂՄԻՅ ԹԻՎ 131 ՈՐՈՇՄԱՄԲ ԸՆԴՈՒՄՎԱԾ՝ «ՍԵՎԾՈՎՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ ՆԻՄՆԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱՉԱՅՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍԱԿՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

7 սեպտեմբերի 2012թ.

Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ.Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Նայասարանի Նանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2011 թվականի հունիսի 19-ին Տիրանայում ՍԾԱԶԲ Կառավարիչների խորհրդի կողմից թիվ 131 որոշմամբ ընդունված՝ «Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրի փոփոխություններում ամրագրված պարտավորությունների՝ Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Նանրապետության Նախագահի՝ 14.07.2012թ. ՆՆ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հեղափոխելով Որոշումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. 1994 թվականի հունիսի 30-ի՝ «Սեւծովյան առեւտրի եւ զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագիրը ՆՏ-ի կողմից վավերացվել է 1995թ. դեկտեմբերի 27-ին՝ ՆՏ ԱԺ Ն-068-1 որոշմամբ:

2. Փոփոխությունները կատարվել են 2011թ. հունիսի 19-ին Տիրանայում՝ ՄԾԱԶԲ-ի Կառավարիչների խորհրդի ընդհանուր համաձայնության հիման վրա: Նշված փոփոխությունների նպատակն է Կառավարիչների խորհուրդն օժտել բացառիկ իրավունքով՝ ընդհանուր համաձայնության հիման վրա փոփոխելու Բանկի հաշվարկային միավորը, վերաբաշխելու դրա կապիտալը, ինչպես նաեւ նպատակահարմարության դեպքում նշանակել բաժանված բաժնեմասերի թիվը եւ անվանական արժեքը:

3. Փոփոխությամբ Նայասպանի Նանրապետությունը պարտավորվում է համաձայնել Նամաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին պարբերության, 23-րդ հոդվածի 2-րդ պարբերության եւ 24-րդ հոդվածի 3-րդ պարբերության փոփոխություններին:

4. Փոփոխությամբ Նայասպանի Նանրապետությունը պարտավորվում է նաեւ դրա ուժի մեջ մտնելու օրվանից, այդ օրը ներառյալ, համաձայնել առ այն, որ.

- Բանկի հաշվի միավոր կսահմանվի եվրոն,
- Բանկի ամբողջ բաժնեպիրական կապիտալը կսահմանվի եվրոյով,
- Բանկի կանոնադրական կապիտալը համարժեք կլինի երեք միլիարդի՝ բազմապատկված Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից սահմանված ՓՆԻ /եվրո փոխարժեքով՝ ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ (Փոխարկման փոկոսադրույք)՝ բաժանված երեք միլիոն բաժնեփոմսերի՝ ունենալով անվանական արժեք, որը հավասար կլինի կանոնադրական կապիտալի գումարը բաժանած երեք միլիոնի,
- ՓՆԻ-ով՝ անդամ պետությունների բոլոր չկատարած կապիտալ պարտավորությունները ենթակա կլինեն վճարման եւ ըստ պահանջի վճարման ենթակա բաժնեփոմսերի մասով կփոխարկվեն եւ կֆիքսվեն եվրոյով՝ Փոխարկման փոկոսադրույքով:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասարանի Նանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2011 թվականի հունիսի 19-ին Տիրանայում ՄԾԱԶԲ Կառավարիչների խորհրդի կողմից թիվ 131 որոշմամբ ընդունված՝ «Սեւծովյան առևտրի եւ զարգացման բանկի հիմնադրման մասին» համաձայնագրի փոփոխություններում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Նայասարանի Նանրապետության Սահմանադրությանը:

2. Նայասարանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ.ՆԱՐՈՒԹ-ՅՈՒՆՅԱՆ

7 սեպտեմբերի 2012 թվականի
ՍԴՈ- 1041